

**Նիստի նախագահ՝**

Հրաչյա Ռոստոմյան

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար, նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ

**խորհրդի անդամներ՝**

Հարություն Յավրյան

Հարություն Բաբայան

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

Արսեն Գաբրիելյան

Գևորգ Սիմոնյան

ՀՀ բազկամարտի ֆեդերացիա

«Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ

Գագիկ Աղաջանյան

«Ապավեն» ՍՊԸ

Լիլիթ Մակարյան

Գյումրու երիտասարդական պալատ

Յուրի Ալեքսանյան

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե

Գոհար Նալբանդյան

«Մեդիամաքս» լրատվական գործակալություն

Արշամ Սարգսյան

«Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ

Հասմիկ Բաբայան

Հայկական օնլայն լրատվամիջոցների ռու լրագրողների ասոցիացիա

## ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետությունում գործող մանկապատանեկան մարզադպրոցների կարգավիճակի մասին

2. Խաղային մարզաձևերի (վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, ֆուտբոլ) համապատասխան բազաներ չունեցող մարզադպրոցների կողմից հանրակրթական դպրոցների մարզադահլիճների օգտագործման և այդ առիթով առաջացող խնդիրների մասին:

### Օրակարգի 1-ին հարցի քննարկում

«Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանն ամփոփ տեղեկատվություն է ներկայացրել հանրապետությունում գործող բոլոր մարզադպրոցների գերատեսչական պատկանելության, կարգավիճակի և այնտեղ իրականացվող ուսումնամարզական գործընթացների վերաբերյալ: Նշվել է, որ բոլոր մարզադպրոցներում ուսումնամարզական գործընթացները պետք է իրականացվեն «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վերահսկողությամբ:

**Ելույթ ունեցան՝** Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի դասախոս Հարություն Բաբայանը, «Քաղկամարտի ֆեդերացիայի նախագահ Արսեն Գաբրիելյանը, «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Գևորգ Սիմոնյանը, Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ միություն» ՀԿ-ի նախագահ Հակոբ Աբրահամյանը, Գյումրու «Երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Լիլիթ Մակարյանը:

**Որոշվեց՝** պատրաստել համապատասխան իրավական փաստաթուղթ՝ խնդիրն օրենսդրական լուծում տալու նպատակով: Միաժամանակ որոշվեց երկշաբաթյա ժամկետում գրավոր ներկայացնել դաշտի կարգավորման կոնկրետ առաջարկություններ:

### Օրակարգի 2-րդ հարցի քննարկում

Խաղային մարզաձևերով մարզվելու համար համապատասխան բազաներ չունեցող մարզադպրոցների կողմից հանրակրթական դպրոցների մարզադահլիճների օգտագործման առիթով առաջացող խնդիրների մասին տեղեկատվությունը ներկայացրել է «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Գևորգ Սիմոնյանը:

**Ելույթ ունեցան՝** «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Արշամ Սարգսյանը:

**Որոշվեց՝** պատրաստել համապատասխան գրության՝ «Կրթության և գիտության նախարարին պաշտոնապես դիմելու և հարցին հնարավոր օպտիմալ լուծում տալու համար:

Հասարակական խորհրդի նախագահ՝



Հ. Ռոստոմյան